

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒՅՈՒՆ  
ԳՈՐԻՍԻ ՅՈՒԻ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հաստատում եմ

Տնօրեն

Գ. Կոստանյան

« 31 » 08 2023թ.



ՔԻՄԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՆՏԻ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ուսումնական տարի

Լաբորանտ՝ Անուշ Դաջունց

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ

(ստորագրություն)

Ավանեսյան Սերգեյ

(ազգանուն, անուն)

**ՏՎՅԱԼՆԵՐ ՔԻՄԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

	<b>Մակերեսը (քմ)</b>	<b>Վերանորոգման կարիքը</b>	<b>Առկա գույքը, սարքավորումներ, նյութեր</b>	<b>Ուսումնադիդակտիկ նյութերը</b>
Քիմիայի լաբորատորիա	15	Այո	Պահարան-6 Մեղաններ-2 Աթոռ-1 Ջրի ծորակ-1 Լաբորատոր սարքավորումներ, հախճապակյա և ապակյա ամանեղեն՝ թասեր, փորձանոթներ, կոլբեր, ձագարներ, չափիչ կոլբաներ, ապակյա ձողեր, ռետինե խցաններ, բռնիչներ և այլն Քիմիական նյութեր:	Պաստառներ 5 Գնդացողային մոդելներ Տարբեր հանքատեսակների՝ մետաղական և ոչ մետաղական, ցուցանմուշների հավաքածուներ Քիմիական արտադրության, մետաղական արտադրության, լինանյութերի, պլասմասաների տարբեր տեսակների, կաուչուկների, պարարտանյութերի ցուցանմուշների հավաքածուներ:

<b>Դասենյակի համար</b>	<b>Դասարան</b>	<b>Սովորող աշակերտների թիվը</b>
517	-	

Քիմիայի լաբորատորիան գտնվում է 8-րդ<sup>ա</sup> դասարանին կից սենյակում: Անվտանգությունն ապահովելու համար լաբորատորիայի դուռը փակ է պահվում: Լաբորատորիան ունի մեկ եռափեղկ լուսամուտ, լաբորատորիան օդափոխվում է:

Լաբորատորիայում աշակերտների հետ միասին աշխատելու հնարավորություն չկա: Փորձերի և ցուցադրությունների համար նյութերը և անհրաժեշտ մնացած սարքերը ու փորձանոթները պետք է տարվեն համապատասխան դասարաններ:

**ՔԻՄԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՆՏԻ**  
**2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

№	Աշխատանքի բովանդակությունը	Աշխատանքի ձևը	Անցկացման ժամանակը	Ենթադրվող արդյունքը
1.	Աշխատանքների պլանավորում նախորդ ուսումնական տարվա արդյունքների վերլուծության հիման վրա		Օգոստոս-սեպտեմբեր	Համակարգված աշխատանք
2.	Լաբորատորիայի սարքավորումների և նյութերի վերադասավորում: Ժամկետանց և չպիտակավորված նյութերի անվտանգ ոչնչացում: Անհրաժեշտ նյութերի ձեռք բերում: Անվտանգության պայմանների ապահովում:	Լաբորատոր աշխատանք	Օգոստոս-սեպտեմբեր	Ավելի հեշտ, անվտանգ և համակարգված աշխատանք
3.	Գործնական, լաբորատոր և ցուցադրական փորձերի համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների նախապատրաստում: Քարշիչ պահարանների բացակայության պատճառով առողջության համար վտանգ ներկայացնող փորձերը փոխարինել ավելի անվտանգ համարժեք փորձերով:	Լաբորատոր աշխատանք	Տարվա ընթացքում	Ավելի հեշտ, անվտանգ և համակարգված աշխատանք
4.	Կապ հաստատել ԳՊՀ-ի լաբորատորիայի հետ: Աշակերտներին նոր և ավելի հետաքրքիր փորձերի հետ ծանոթացնելու համար կազմակերպել էքսկուրսիա ԳՊՀ: Ձեռք բերել դպրոցի լաբորատորիային անհրաժեշտ որոշ նյութեր:		Տարվա ընթացքում	Քիմիան ավելի հետաքրքիր ու գրավիչ դարձնել, նպաստել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը:
5.	Օգտվել վիրտուալ լաբորատորիաների ընձեռած հնարավորություններից	Դաս միջոցառում	Տարվա ընթացքում	Սովորողների հետաքրքրությունների զարգացում, ծանոթացում քիմիայի արդի նվաճումներին
6.	Ծանոթացում քիմիայի լաբորատորիայում հաճախ օգտագործվող սարքավորումներին, փորձանոթներին և մնացած ամանեղենին՝ լաբորատոր կալան, սպիրտայրոց և այլն:	Գործնական աշխատանք	Սեպտեմբեր	Աշակերտների մոտ փորձնական հմտությունների ձևավորում
7.	Նախապատրաստել նյութերը և սարքավորումները «Խառնուրդների բաժանում» գործնական աշխատանքի համար:	Գործնակա աշխատանք	Հոկտեմբեր	Տեսական թեմայի ամրապնդում փորձերի միջոցով

8.	Թթվածնի ստացումը և հատկությունները: Նախապատրաստել նյութերը և սարքավորումները: Անց կացնել դասը: Ապահովել անվտանգությունը:	Գործնական աշխատանք	Նոյեմբեր	«Թթվածին» թեմայի ամրապնդում
9.	Ջրածնի ստացումը և այրումը: Նախապատրաստել քիմիական նյութերն ու սարքավորումները: Ապահովել անվտանգությունը	Գործնական աշխատանք	Հունվար	Սովորողների գիտելիքների փորձարարական ամրապնդում «Ջրածին» թեմայից
10.	Տրված զանգվածային բաժնով լուծույթների պատրաստում: Նախապատրաստել համապատասխան նյութեր և փորձանոթներ	Գործնական աշխատանք	Փետրվար Մարտ	Փորձարարական հմտությունների ամրապնդում
11.	«Ջուր» թեմայի վերաբերյալ դաս միջոցառման կազմակերպում: «Մաքուր ջրի համամոլորակային հիմնախնդիրը» 8-րդ դասարան	Գործնական աշխատանք	Մարտ	Դասապրոցեսին վերաբերվող նյութերի պատրաստում, պաստառների, աղյուսակների կազմում՝ օգտվելով համացանցից:
12.	«Էլեկտրոլիտիկ դիսոցման տեսություն» թեմայի վերաբերյալ գործնական աշխատանքի նախապատրաստում	Գործնական աշխատանք	Հոկտեմբեր	Թեմայի ամրապնդում
13.	Քլորի ստացումը: Նախապատրաստել քիմիական նյութերն ու սարքավորումները: Ապահովել անվտանգությունը: Ցուցադրել նաև բրոմի և յոդի ցնդումը:	Ցուցադրական փորձ	Նոյեմբեր	Ճանաչողական հմտությունների ձևավորում
14.	Ծծմբական թթվի և դրա աղերի հայտնաբերումը: Նախապատրաստել և անց կացնել փորձը: H <sub>2</sub> SO <sub>4</sub> -ի հետ աշխատելուց ուշադրություն դարձնել անվտանգությանը:	Գործնական աշխատանք	Հունվար Փետրվար	Կարողանան անվտանգ աշխատանքով ծծմբական թթվի հետ: Իրականացնել որակական ռեակցիաներ
15.	Ամոնիակի ստացումը և հատկությունները: Նախապատրաստել համապատասխան նյութեր և փորձանոթներ փորձի անցկացման համար	Գործնական աշխատանք	Մարտ	Ամոնիակի ստացումը և հատկությունների ուսումնասիրումը
16.	Հայաստանի քիմիական գործարանները. համառոտ տեղեկատվություն	Համառոտ տեղեկատվություն	Մարտ	Ծանոթացում կոմբիանտում արտադրվող քիմիական արտադրանքին
17.	Հանքային պարարտանյութեր, նրանց նշանակությունը, օգուտներն ու	Դաս միջոցառում	Ապրիլ	Գաղափար հանքային պարարտանյութերի

	վնասները:			մասին
18.	Սիլիկատային արդյունաբերություն: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է սիլիկատային արդյունաբերության մի ոլորտը	Խմբային աշխատանք	Ապրիլ	Սովորողներն իմանան այդ արդյունաբերության ոլորտները, արտադրվող նյութերն ու դրանց կիրառումը
19.	Մետաղների նմուշների ցուցադրում: Ծանոթացում Հայաստանի մետաղական արդյունաբերությանը՝ դասախոսության ձևով	Ցուցադրական փորձեր	Ապրիլ	Ծանոթանալ կարևորագույն մետաղներին ու համաձուլվածքներին
20.	Ալկալիական մետաղների(Na) և ջրի փոխազդեցությունը	Ցուցադրական փորձ	Մայիս	Իմանալ ալկալիական մետաղների առանձնահատկությունները
21.	Երկաթի և ալյումինի համեմատական բնութագիրը	Խմբային աշխատանք	Մայիս	Լինել տեղեկացված այդ կարևոր մետաղների մասին
22.	Գործիսում կրաքարից կրի ստացման պատմությունը	Ինքնուրույն աշխատանք	Տարվա ընթացքում	Ինքնուրույն հետազոտային աշխատանք
23.	Հայաստանում առկա ինչպիսի՞ մետաղական և ոչ մետաղական հանքատեսակներ են ձեռք հայտնի:	Լրացուցիչ տեղեկություններ աշակերտների կողմից	Տարվա ընթացքում	Ինքնուրույն հետազոտային աշխատանք
24.	Ներկայացնել կատարած աշխատանքների հաշվետվությունը		Մայիս	